№ 74 ԿԻՐԱԿԻ ԱՊՐԻԼԻ 6 1903 ԿԻՐԱԿԻ ԱՊՐԻԼԻ 6 № 74

ԵՐԵՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾԲՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում պրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ ազն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

ԼՐԱԳԻՐԸ

1903 ԹՎԻՆ

12	ամսվանը	10	ռուբլի
11	»	9	»
10	»	8	»
9	»	7	»
8	»	6	»
7	»	1	»
6	»		

Մնացածները ամսական

Եւ ռուսայում՝ 30 ֆր., Ամերիկայում՝ 6 դոլլար, Պարսկաստանում՝ 10 ռ.

Հասցէն՝ Тифлисъ. Редакція „Мшакъ“.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գաղափարի քարոզը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կիրակնօրեայ զրոյց. Մկների յաղթանակը. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Գերմանական լիբերալիզմի ապագան. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. Մանրանկար.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԳԱՂԱՓԱՐԻ ՔԱՐՈԶԸ

Գաղափարը պէտք է տարածել, պէտք է ժողովրդականացնել—ահա այն ուխտը, որ մարդկութեան Մեծ Ուսուցիչը կտակեց իր աշակերտներին։ Եւ Յարութեան օրը ամէն տարի մենք լսում ենք ոգեշունչ պատուէրը՝ «գնացէք այսուհետև քարոզեցէք», պատուէր, որ ասում է՝ թէ ձեր պաշտած և սիրած գաղափարները դարձրէք սեփականութիւն բոլորի համար, ձեր գտած ճշմարտութիւնը և լոյսը սփռեցէք ժողովրդական ովկիանոսի մէջ և հրաւիրեցէք տգէտ մարդկութիւնը փրկարար և արդիւնաւէտ գործունէութեան։

Սկզբունքները և գաղափարները առաջ են մղվել և մղվում են մարդկութեան կեանքում մեծ դժուարութեամբ։ Սակայն երբ նրանք մի անգամ գտնվել և պարզվել են, երբ զոհաբերութիւնների և զրկանքների միջով անցնելուց յետոյ՝ նրանք յաղթական կերպով ասպարէզ են նետվել, այնուհետև հանդէս է գալիս մի մեծ պարտաւորութիւն, այն է այդ սկզբունքները և գաղափարները ընդհանրացնել և նրանց մտցնել մասսաների գիտակցութեան մէջ։ Այդտեղից ծագում է քարոզչութեան և առաքելութեան թէև ծանր և պատասխանատու, բայց մի և նոյն ժամանակ գրաւիչ և ոգևորող գործունէութիւնը, որը եթէ պարտականութիւն է՝ նա մի և նոյն ժամանակ և վեհ կոչման մի արտայայտութիւն է։

Քարոզը և առաքելութիւնը կատարվել են և կարող են կատարվել զանազան միջոցներով թէ խօսքով և գործով, թէ անհատական և խմբական ոյժերով, թէ սրտի և զգացմունքի և թէ մտքի ու համոզմունքի վրա ազդելով։ Ընդունելով, որ քարոզի և առաքելութեան ձևերից մէկն էլ մամուլն է և առհասարակ տպագրական խօսքը, մենք Մեծ Քարոզչի տօնի օրը հրաւիրում ենք մտքի մշակներին և մեր ընթերցող ու բանիմաց հասարակութեանը երբէք չը մոռանալ, որ լուսաւոր աշխարհը առաջ է գնացել և քաղաքակրթութիւնը զարգացել է մի շարք գաղափարներով, որոնք լուսաւոր մարդկութեան ամենաթանգագին սեփականութիւններն են դարձել և որոնք սակայն դեռ չեն տարբերվել և իւրացվել մեզանում։ Եթէ Եւրոպայում մտածող և նախաձեռնող ոգիների մի մեծ թիւ զբաղված էր սկզբունքներ և գաղափարներ մշակելով, նա և մեզ համար պատրաստել է գործունէութեան ծրագիրներ և հարթել առաջխաղացութեան ուղիներ։ Մնում է, որ մենք մեր կողմից աւելացնենք փոքր ինչ ինքնուրոյն վերաբերմունք և գիտակցութիւն, յորմարեցնենք արդէն պատրաստը մեր պայմանների համար և այնուհետև յանձն առնենք քաղաքակրթական կեանքի և գործունէութեան առաքելութիւն։

Գնացէք և քարոզեցէք։ Գնանք և քարոզենք։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԶՐՈՅՑ

Մինչև որ սերմը չէ ընկել երկրի մէջ, նա ինքն է որ ապրում է մենակ. բայց երբ ընկաւ հողի մէջ, արդիւնքներ շատ և շատ կը տայ։

Այսպէս էր բացատրում իր կոչումը Նա, որի յարութիւնը այսօր աշխարհը տօնում է անսահման ցնծութիւններով։

Մի շաբաթ ունէինք մինչև այս կարմիր օրը և նրան անուանում ենք Զարչարանքի շաբաթ։ Վեց օր մենք յիշատակում էինք դէպքեր, որոնք պատրաստեցին և գլուխ բերին մարդկային կեանքի մէջ տեղի ունեցած ամենամեծ աղէտներից մէկը։ Դարեր են անցել, մարդիկ չեն մոռացել այդ դէպքերը. այսօր էլ նրանք թարմ, յուզիչ են, ինչպէս հարիւր ու հազար տարի առաջ։ Կանցնեն դարեր, դարձեալ այսպէս կը լինեն այդ դէպքերը ամէն մի էակի համար, որ կրում է իր մէջ մարդկային սիրտ։

Զարչարանքի շաբաթ... Ի՞նչ չարչարանքներ են դրանք։ Այն իսկ չարչարանքները, որոնք դարերի սկզբից կախված են մարդկութեան վրա իբրև յաւիտենական անէծք, որոնք սկիզբ են առել մարդու ընութեան հետ, եկել են մինչև մեր օրերը և կերթան դեռ շատ երկար, գուցէ տասնեակ դարեր։

Այն ահագին տարածութիւնը, որ կայ այդ չարչարանքների և այժմեան մեր ժամանակի մէջ, թոյլ չէ տալիս լաւատես, շատ հաւատացող լինել ապագայի, գոնէ մօտիկ ապագայի վերաբերմամբ։ Ի՞նչ է ասում չարչարանքների շաբաթը։

Ահա Պիղատոսը, մարդկային արդարադատութեան ներկայացուցիչը։ Նայեցէք նրան։ Հազար ութ հարիւր տարուց աւել է անցել այդ պատկերի վրայով։ Բայց նա չը կայ այսօր, չէ շարժվում, խօսում մեր մէջ, չէ գործում, դատավճիռներ չէ արձակում։

Այո, անմեռ է Պիղատոսը։ Նա այսօր էլ նոյնն է, ինչ հազարաւոր տարիներ առաջ։ Այսօր էլ նոյն զզուելի արդարադատութիւնը. ճանաչել մարդու արդարութիւնը, հասկանալ, որ մեղք չէ գործված, որ սուրբ իրաւունքն է խօսում իր առջև, բայց մի և նոյն ժամանակ թոյլ տալ, որ նահատակվի անմեղը, թոյլ տալ, որ դժբախտ երկրի վրա թափվի աշխարհի ամենանուիրական հասկացողութիւնները մարմնացրած մարդու արիւնը։ Ո՞ւր է փոփոխութիւնը, ո՞ւր է այն դասը, որ տուեց Քրիստոսին դատող հռովմէացի դատաւորը։ Դու արդար ես, դու մեղք չունես, ես շատ լաւ գիտեմ, որ դու պիտի ազատ լինես, ապրես ու գործես ազատ, բայց ես չեմ կարող իմ իշխանութիւնը, իմ ոյժը գործ դնել քեզ պաշտպանելու համար. ե եթէ քեզ սպանեն, ես չեմ ցաւի, ես ձեռքերս լուացել եմ։ Քեզ և քո թշնամիներին թողնում եմ իրար հանդէպ, ինչ ուզում էք արէք իրար։

Կանչում է ոտնահարված արդարութիւնը, հեծում է, երկինքն է հասցնում իր ձայնը։ Մորմոքում է մարդկային սիրտը անմեղի արիւնից, վրդովվում է հոգին, մաղերը ցից-ցից են կանգնում։ Բայց աշխարհային իրողութիւնը կատարվում է իր կարգով։ Ձեռքերը լուացած դատաւորը լաւ է, հանգիստ իր խղճի հետ։ Նա լուացել է ձեռքերը, նա կատարել է մի բան, որ յաւիտեան պիտի հանգստացնէ նրան, պիտի ներկայանան իբրև մի սովորական մահ, թէև ժայռերը աղաղակեն նրա գործած ապօրինութեան դէմ։

Եւ չը կայ մեր լուսաւոր աշխարհում մի անկիւն, ուր Պիղատոսների լուացած ձեռքերը չը նուիրագործեն անմեղութեան, արդարութեան, իրաւունքի նախատակութիւնը։ Միայն անհատներ չեն պիղատոսական դատարանի առջև, այլ և ամբողջ ազգեր։ Տեսնում էք, ընթերցող, Զարչարանքի շաբաթում, Պիղատոսի օրերում, նոյն դատաստանը, նոյն անմեղութեան խոստովանութիւնը, և նոյն արիւնը, անմեղ, սուրբ արիւնը։

Ահա նոյն Զարչարանքի շաբաթվայ գիշերային մռայլի մէջ բարձրանում է Ցուդայի դէմքը։ Մատնիչ... Անիծում է նրան ամբողջ աշխարհը, անիծում է հազարաւոր տարիներ։ Չի ջնջվի երբէք այդ զզուելի պատկերը, որ նահատակը այնպիսի տյրող գոյներով նկարել է միլիոնաւոր մարդկութեան առաջ.—երեսուն արծաթը ձեռքում, դաւաճանութեան համբոյրը շրթունքների վրա։ Համբոյրը, սիրոյ նշանը, մաքուր սրտերի թարգմանը ապականված գազրալի վաճառքի նպատակով։ Կայ աշխարհի մէջ աւելի քստմնելի մի սրբապղծութիւն։ Բայց վերադել են այդ համբոյրները։ Ո՞ւր, որ խորշի մէջ չեն լսվում նրա ձայները. ո՞ւր չէ շրխկում երեսուն արծաթի քսակը։ Մատնիչ, անիծված լինես դու, կանչում է մարդկութիւնը հազար ութ հարիւր տարիներից ի վեր... Բայց այսօր էլ մեր մէջ վխտում են նոյն Ցուդաները, այսօր էլ եղբօր արիւնը ծախվում է երեսուն արծաթով, այսօր էլ ամենասուրբ զգացմունքի անունով մատնում են մարդու սրտի մէջ, որպէս զի տանեն դահիճներին յանձնեն նրան...

Ցիշեցէք Զարչարանքի շաբաթից հրէական քահանաներին և մեծաւորներին։ Ազգի ընտրեալները, ազգի առաջնորդները։ Բայց որքան կոյր, որքան արիւնածարաւ։ Նրանք չը նկատեցին նոր երևոյթը, որ եկել էր լոյս տարածելու, եկել էր հին մարդու հոգին վերանորոգելու, ազատութեան, հաւասարութեան, եղբայրութեան պաշտամունք քարոզելու։ Կեանք, թարմ, երիտասարդական կեանք էր եկել դժբախտ, հալածված, մոլեռանդ ազգի մէջ։ Իսկ նրանք աղաղակում էին. «Մահ, թող դրա արիւնը մեր և մեր որդիների գլխին թափվի»։ Եւ թափվեց այդ արիւնը։ Եւ այդ ազգը կրեց իր պատիժը։

Մարդկային կեանքի տեսարան։ Կուրացած ազգեր, որոնք պինդ գրկում են խաւարը և յամառութեամբ դիմում են դէպի կորստեան վիհը։ Եւ քանի՜ ազգեր են գնացել այդ ճանապարհով, քանիսներն են գլորվել ու գլորվում են այժմ էլ։

Ցիշ՛ցէք և ուրիշ մանրամասնութիւններ։ Սրբութիւնը հայհոյված, գաղափարը ամբոխի լիրբ հռհռոցներին մատնված, վայրենի ոյժը յաղթանակով պարծեցող, իսկ նահատակը աւազակների վիճակակից դարձած։ Նոյն բարբարոսութիւնները կատարվում են և այսօր. կատարում է նրանց լուսաւորված մարդկութիւնը, կատարում է հրապարակով, կատարում է ճիշդ այնպիսի պատճառաբանութիւններով, ինչպէս հրէական մոլի ամբոխը հազար ութ հարիւր տարի առաջ։

Զարչարանքի շաբաթը մարդ ասած բանի ամբողջ պատմութիւնն է։ Նրան կարելի է լայնացնել, ընդարձակել մինչև անհունութիւն. բայց մեզ գրքեր, բազմաթիւ հատորներ չեն հարկաւոր, ոչ էլ տարիների ուսումնասիրութիւն։ Փաստեր են մնացել գաղափարական ուսուցչի նահատակութեան օրերից, փաստեր, որոնք մեզ հետ են, որոնք յիշատակվում են տարէցտարի մի երեք-չորս օրվայ ընթացքում։

Բայց ինչ են այդ օրերը։ Նրանք միայն ցոյց են տալիս, թէ ինչպէս է սերմը ընկնում հողի մէջ, որպէս զի արդիւնքներ շատ տայ։ Տանջանքներ, չարչարանք, թոյք ու մուր, ծաղր ու զարհուրելի անարդարութիւն էին հարկաւոր։ Նրանք չը պիտի յուսահատեցնեն, նրանք չը պիտի ներկայանան իբրև մի տովորական մահ, թէև ժայռերը աղաղակեն նրա գործած ապօրինութիւնն։

Ո՛չ։ Զարչարանքի շաբաթը—դա մեր ամենամեծ մխիթարութեան գրաւականն է։ Կայ այդ շաբաթը իւրաքանչիւր կեանքի մէջ, և սերմը հողի մէջ մտած կը լինի՝ արդիւնքներ տալու համար։ Իւրաքանչիւր գաղափար իր խաչն ունի, որի ծանրութեան տակ յաճախ չոքում է նրան կրողը։ Բայց և չոքեցող ընկած՝ պէտք է առաջ գնալ՝ արեան և քրտինքի չիթերով ցողելով այն ճանապարհը, որով տանվում է ծանր, ճնշող խաչը։ Սերմը հողին է յանձնվում. դա երկանք է, դա և տանջանք է։ Բայց արդիւնքները առջևում են։ Դէպի առաջ, ուրեմն։

Եւ եթէ, ընթերցող, այսպէս կը հասկանաք դուք Զարչարանքի շաբաթը, այսօր, երբ ծանր խաչի յաղթանակն ենք տօնում անհուն հրճուանքով, ես էլ կը մոռնամ ձեզ և կասեմ։

—Շնորհաւոր Զատիկ, շնորհաւոր յարութիւն, շնորհաւոր յաղթութիւն...

Լ.

ՄԿՆԵՐԻ ՅԱՂԹԱՆԱԿԸ
(Նամակ Իգդիրից)

Անցեալ սեպտեմբեր ամսին կատարած միրաւի ընտրութիւնը, որ բեկանվել էր, նորից կատարվեց մարտի 18-ին։ Մկները կատուի վրա անապատելի կերպով կատարեալ յաղթանակ տարան այս անգամ։ Ուղիղ տասը տարվայ ընթացքում ոչ մի անգամ այսպիսի խաղաղ, կանոնաւոր, օրէնքի համաձայն ընտրութիւն կատարված չէր Սուրմալուի մէջ, թէպէտ ընտրութիւն շատ անգամ էր կատարվել։

Նահանգական իշխանութեան խելացի կարգադրութեան շնորհիւ ոստիկանութեան կողմից կարգապահ էր նշանակված պրիստաւ պ. Ֆլորինսկին, կանոնաւոր և անթերի լինելուն հրամայում էր նահանգական ինժենէր պ. Տարլօվսկին, որոնց երկուսին էլ ժողովուրդը անսահման հաւատում է, և որոնք երկուսն էլ իրանց անկողմնապահ վարմունքով արդարացրին ժողովրդի յոյսը։ Ընտրելիները փակված էին մի առանձին սենեակում, որոնք հնարաւորութիւն չունէին տեսնելու, թէ ինչ է կատարվում դրսում, քուէտուփի մօտ և հնարաւորութիւն չունէին քուէարկողների վրա ազդեցութիւն գործելու։ Քուէտուփերի մօտից և ճնշումից գործ դնելուց հեռացրված էին նաև գլաւաները իրանց օգնականներով, գիւղական գրագիրների հետ, որոնք առհասարակ մեզնում՝ հակառակ օրէնքի ոգու՝ ամէն բան տակն ու վրա անող տարրն են կազմում։

Այսպիսի բարեյաջող պայմանների շնորհիւ, որին շատ քիչ է արժանանում խեղճ ու կրակ սուրմալուեցին, մի հրաշք կատարվեց։ Սուրմալուի երկրագործի համար վերջապէս մի արշալոյս ծագեց։ Նա ազատվեց Մասիս սարի նման մի ճնշող բեռից, նրա կոկորդը ազատվեց տասնամեայ ճնշող կօշմարից։

Նախկին միրաւ Ալին, որ անտանելի պայմաններով չղթայում էր ժողովրդին և միաձայն ընտրվում, այս անգամ իր եղբօր Մեհտիղուլու հետ այնպիսի մի պարտութիւն կրեց միաձայն ընտրող նախկին ժողովրդից, որ երկար ժամանակ չի մոռանայ իր ոչնչութեան հաւատարվելը, որպիսի ոչնչութիւնից դուրս գալով այլ ևս բնութեան օրէնքը չէր ուզում ճանաչել ոչ մի պայմանով։ Նա, որ մի երկու օր առաջ պատրաստ էր երկնքին օրէնքներ թելադրել, այսօր իր թշուառ գոյութիւնը հազիւ քարշ էր տալիս Իգդիրի փողոցով ուրիշի ատուերի տակ։

Պատճառը։

Այսպիսի փոփոխութեան պատճառն այն էր, որ այս անգամ պաշտօնավարութեան մէջ տիրում էր ոչ թէ օրէնքի լոկ ձևականութիւնը, այլ գլխաւորապէս նրա ոգին. ընտրութիւնը կատարվեց առանց մազի չափ բռնութեան ենթարկվելու, առանց մտրակի հարուածների, որ նախկին ընտրութիւնների ժամանակ իբրև անհրաժեշտութիւն էր համարվում. և հէնց այդ մտրակահարութեան բացակայութեան շնորհիւ

կատարվեց կատարեալ ծայրայեղ փոփոխութիւն։ Միրաւ ընտրվեց Աղաբէգ Մահմադ-կուլի Բէգ-օղլին, իսկ կանդիդատ՝ Բագրատ Արտաղեան, այսինքն այնպիսի անձինք, որոնք միանգամից մոռացնել պիտի տան անչուշտ իրանց նախորդի մռայլ ու տխուր յիշատակը, որ հազարաւոր թշուառների անէծքի առարկայ է դարձած ամբողջ տաս տարի։ Անկեղծ ենք, որ յիշեալ նորընտիր պարոնները միանգամայն ղէպք է արդարացնեն ժողովրդի նրանց վրա դրածը յոյսը։

Ասում են, որ Սուրմալու գաւառի ժողովուրդը անհանդիստ, խռովարար է, «կլաուզնի». (клаузный) բառը այժմ սովորական թուրքակի պէս կրկնում է, առանց իմաստը հասկանալու, յետին եսավուն և չոմուշը, երբ մէկը չէ ուզում իր գրպանը բաց անել նրա համար. սակայն ներկայ ընտրութիւնը եկաւ ապացուցանելու, որ «կլաուզնին» ոչ թէ ժողովուրդն է, այլ հէնց նրանք են, որոնք ջուրը պղտորում են ձուկ որսալու համար, որոնք առանց ժողովրդի արիւնը ծծելու չեն կարող մնունդ ստանալ, գոյութիւն ունենալ...

Գրիսաաւ Ցլորինսկու և ինժենէր Տարլովսկու բարեխիղճ, անկողմնապահ, վերին աստիճանի քաղաքավարի և օրէնքի հոգու տրամադրութեան համաձայն կատարած պաշտօնավարութիւնը պերճախօս կերպով ապացուցեց, որ մի քանի օր առաջ կլաուզնիյ հռչակված ամբոխը այսօր մի բարեկիրթ հասարակութիւն կարող է ներկայացնել, որին միայն ուժովը չը շեղեն ուղիղ ճանապարհից։

Սա մի փառաւոր դաս էր կեղծիքի և խարդախութեան մէջ գոյութիւն որոնողների համար։

Ցովհ. Խօջայէնաթեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Պետերբուրգ, մարտի 12-ին
Բացնամակ, պ. Լէօ-ին

Ներողութիւն ենք խնդրում այն բանի համար, որ ձեր ստորագրութիւնը չէ դրված ձեր կազմած «Այվազովսկու» կենսագրութեան տակ, որ մենք զետեղել էինք մեր խմբագրած հրատարակութեան—«Գեղարուեստական Ալբօմ»-ի մէջ։

Մենք ոչ մի «փոլիթիկա»-ով չենք առաջնորդվել, ինչպէս կարծում էք. պատճառը եղել է այն, որ մենք սկզբում միտք չենք ունեցել յօդուածների տակ դնելու հեղինակների անունները. իսկ կենսագրութիւնից հանված են այն անչափ կտորները, որոնք չէին վերաբերում իրան, Այվազովսկուն, այլ աւելի շատ նրա բարեկամներին, եղբօրն էին վերաբերում։

Ե. Բաղդասարեանց
Դ. Օքրոյեանց

—

Շատ սիրուն է պ.պ. Բաղդասարեանի և Օքրոյեանի այս պատասխանը։ Այժմ յայտնի է դառնում, որ նրանք սկզբում միտք էլ չեն ունեցել հեղինակների անունները դնել յօդուածների տակ. նշանակում է թէ պ.պ. խմբագիրները սկզբում միտք են ունեցել տպագրել մի քանի անձանց յօդուածները, չը յիշելով անգամ թէ ովքեր են գրել և հրատարակել այդ բոլորը, չը մոռանալով իրանց անունները գրել գրքի վրա։ Բայց ստորագրութիւնը ինձ համար մի առանձին նշանակութիւն չունի, ես այսպէս էլ ասել եմ իմ նամակում։ Գլխաւոր կէտերը սրանք են. 1) պէտք էր յիշել, թէ իմ յօդուածը արտատպութիւն է «Մշակից». 2) պարոնները իրաւունք չունէին որ և է իցէ կրճատում անել յօդուածիս մէջ, քանի որ այդպիսի իրաւունք ես չեմ տուել. 3) անբարեխիղճ վերաբերմունքի պատճառով դուրս է գցված իմ յօդուածից այն կտորը, ուր յիշված է իմ աղբիւրը, այնպէս որ դուրս է եկել թէ դա իմ սեփական աշխատութիւնն է, մինչդեռ ես մեծ մասամբ թարգմանօրէն քաղել եմ ուրիշ տեղերից։ Այս երեք գլխաւոր կէտերը այժմ էլ դեռ մնում են բաց, ոչնչով չարդարացրած...

Լէօ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«Մշակի» հետեւեալ համարը, զտակական տօների պատճառով, լոյս կը տեսնէ, ուրբաթ, ապրիլի 11-ին։

—

Ողջունելով «Շիարգի-Ռուս» թուրքերէն լրագրի հրատարակութիւնը, մենք այն կարծիքն էինք յայտնել, որ լրագիրը աշխատէր մօտենալ այն բարբառին, որով խօսում է մեր երկրի և Ադրբէյջանի թուրք ազգաբնակութիւնը. մի և նոյն ժամանակ մենք խորհուրդ էինք տուել լրագրին խոյս տալ հասարակ ընթերցողի համար անհասկանալի արաբական և պարսկական բառերից։ Շնորհակալութիւն յայտնելով մեզ մեր ցոյց տուած համակրութեան համար, թուրք թերթը իր № 3-ի մէջ պատասխանում է մեր դիտողութեան և աշխատում է համոզել մեզ, թէ մեր ցանկութիւնը դժուար իրագործելի է, որովհետև Ադերբէյջանի բարբառը հասկանալի չէ բոլոր տեղերի թուրքերին. գալով արաբ և պարսիկ բառերին, կան բառեր, որոնք արդէն քաղաքացիականութեան իրաւունք են ստացել թուրք ժողովրդի խօսակցութեան մէջ, իսկ կան դաղափարներ և հասկացողութիւններ, որ արտայայտել թուրքերէնով անհնարին է։ Լրագիրը այն կարծիքի է, թէ ինչ չափով լատիներէն և յունարէն բառերը անհրաժեշտ են եւրոպական լեզուների մէջ, նոյնչափ և արաբ ու պարսիկ բառերը անհրաժեշտ են թուրք լեզուի մէջ։ Այս հարցին մենք կը վերադառնանք։

—

Մեզ հաղորդում են, որ Հռոմում բացված միջազգային գիւղատնտեսական ժողովում Կովկասի ներկայացուցիչների և սունկերի մասին զեկուցում պէտք է անէ միկոլոգ Սպէշնեվ, որ ներկայումս գտնվում է Հռոմում։

—

Մեզ հաղորդում են, որ Կովկասեան գիւղատնտեսական ընկերութիւնը դիտաւորութիւն ունի ապրիլի 14-ին կատարել իր տարեկան հանդէսը, որտեղ կը կարդացվի անցեալ տարվայ գործունէութեան տեղեկագիրը և տեղի կունենան պաշտօնատար անձերի ընտրութիւններ։

—

Պետերբուրգի արհեստաւորների ընդհանուր ժողովը որոշեց, ի յիշատակ Պետերբուրգի հիմնարկութեան 200-ամեայ յոբելեանի, հիմնել Պետրոս Մեծի անունով մի արհեստաւորական առն, որի մէջ լինէին թատրոնական և կօնցէրտի դահլիճներ, որտեղ տրվէին հանրամատչելի ներկայացումներ և համերգներ արհեստաւորների համար, ինչպէս նաև մշտական թանգարան զանազան արհեստների վերաբերեալ գործիքների և այլ իրերի։

—

Քրէական պատժագրքի նոր կանոնադրութիւնը, որի վրա երկար տարիներ աշխատում էր սենատոր Տագանցեվի նախագահութեամբ գործող մասնաժողովը, մայրաքաղաքի լրագիրների ասելով, մօտ օրերումս կը հրատարակվի։

—

Ժողովրդական առողջութեան նպաստող ռուսաց ընկերութիւնը այս գարնան վերջերում բաց է անում իր առողջապահական երկրորդ համառուսական ցուցահանդէսը։

—

Ֆինանսների մինիստրութեան մէջ, ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի լրագիրները, հարց է բարձրացած միջոցներ ձեռք առնելու ռուսական շաքարը դէպի Պարսիր ծոցի նաւահանգիստներն արտահանելու համար։ Մատդրութիւն կայ շաքարի այդ արտահանութիւնը քաջալերել՝ տալով արտահանողներին զանազան արտօնութիւններ։

—

Վիէննայի «Neue Freie Presse» լրագիրը հաղորդում է, որ Վիէննայի պարսից դեսպան հայազգի Նարիման-խան Ենիկոլոփեան նորերս կամաւոր կերպով հրաժարական տուեց դեսպանական պաշտօնից՝ պարսից կառավարութեան կողմից վաղօրօք հաստատութիւն ստանալուց յետոյ։ Նարիման խանի հրաժարվելու միակ պատճառը նրա ծերութիւնն է (մօտ 73 տարեկան)։ Նա պարսից դեսպան է եղել մօտ մի քառորդ դար, այնպէս որ շուտով պէտք է լրանար և հանդիսաւոր կերպով տօնվէր նրա դիպլոմատիական գործունէութեան 25-ամեայ յոբելեանը։ Ինչպէս յայտնի է Նարիման-խանը ամուսնացած էր հայազգի Դաղեան փաշայի այրիացած աղջկայ հետ, որից ունեցել է երկու աղջիկ, իսկ նրա կինը առաջին ամուսնութիւնից ունէր միայն մի որդի՝ Նօվրուզ-խանը։ Նարիման խանը այժմ իր ընտանիքով կարճ ժամանակով ապրում է Սաքսօնիայի մայրաքաղաք Դրեզդէնում և մտադիր է վերջնականապէս հաստատվել Իտալիայի գեղեցիկ քաղաքներից որ և է մէկում՝ այնտեղ իր կեանքի վերջին տարիները հանգիստ անցկացնելու։ Ինչպէս յայտնում է աւստրիական վերոյիշեալ թերթը, Նարիման-խանը Վէննայի արիստոկրատիական և պետական շրջաններում շատ յարգված և մեծ դիրք ունեցող մի անձնաւորութիւն էր։ Ո՞վ կը լինի Նարիման-խանի յաջորդը, առ այժմ դժուար է այդ բանը գուշակել, բայց ի նկատի ունենալով, որ Եւրոպայում պարսից դեսպանների մեծ մասը հայեր են, հաւանական կանդիդատներից մէկն էլ կարող է լինել և Յովհաննէս-խան Մատէոսեանը, որը այժմ Բերլինի պարսից դեսպանական առաջնէն և դեսպանական խորհրդականն է։

—

Հռոմ քաղաքում հրատարակվող հելլենօ-լատինական ընկերութեան օրգան «Կրօնախ» հանդէսի մէջ, որի խմբագիրն է յայտնի արեւելագէտ պրոֆէսօր կոմս Անջէլօ-դը-Գուբերնատիս, տպված է մեր աշխատակից Հ. Առաքելեանի զեկուցումը «Հայերի յարաբերութիւնը Արևմուտքի և մանաւանդ Իտալիայի հետ» վերնագրով։ Տպելով այդ զեկուցումը իբրև առաջնորդող յօդուած, պրոֆէսօր Գուբերնատիս մի քանի համակրական խօսքերով ողջունում է հեղինակին նրա համար, որ նա աշխատում է գրական յարաբերութեան մէջ դնել հելլենօ-լատին և հայ գրողներին։

—

Անցեալ մարտ ամսի 22-ին լրացաւ 10 տարի այն օրից, երբ երկրագործութեան և պետական կալուածների մինիստր Երմօլով ստանձնեց իր ներկայ պաշտօնը։ Յօբելեանը, որ կատարվեց այդ առիթով, մայրաքաղաքի լրագիրների ասելով, բոլորովին ընտանեկան բնաւորութիւն էր կրում, որովհետև մինիստր Երմօլով հրաժարվեց յօբելեանի պաշտօնական կատարումից։ Զը նայելով սրան, մինիստրը բազմաթիւ շնորհաւորական հեռագիրներ ստացաւ պետութեան զանազան մասերից։

—

ՇՈՒՇՈՒ մեզ գրում են. «Արդէն ըստ սովորութեան սկսել են «մատաղի» միսը հաւաքողները ապարէզ երթալ... Եւ ոմքեր... Նպատակայարմար չէր լինի, եթէ ժողոված գումարը, որ երևի մէկ հազարի կը հասնէ, բաժանէին աղքատներին, տնանկներին»։

—

ՍԱՆԱՀՆԻՑ մեզ գրում են. «Սանահնի վանահայր Գարեգին եպ. Սաթունեանը մի քանի հարուստ բաղուցիների դրամական ձեռնտուութեամբ սկսել է արդէն կառքի ճանապարհ շինել Ալավերդի երկաթուղային պլատֆորմից մինչև վանքը։ Բաղուեցի մի քանի ընտանիքներ մտադիր են ամառանոցներ կառուցանել վանքապատկան հողի վրա, այն պայմանով, որ մի յայտնի տարիներից յետոյ բոլոր այդ շինութիւնները դառնան վանքի սեփականութիւն։ Սանահնի սարահարթը նշանաւոր է իր օդով։ Վերջերս կալուածատէրերից մէկը և միւսը աշխատում են ամառանոցների տեղեր ծախել, բայց ափսոս որ այդ հողաբաժինները գտնվում են ձորի մէջ, հէնց երկաթուղու գծի մօտ, ոչ թէ վերևի սարահարթի վրա, մի այնպիսի տեղում, ուր ամառը օդը անշարժ կանգնած է և ոտթը Թիֆլիսի ոտթից ստատիկ է»։

—

ԲԱՇ-ԳԻՒՂԻՑ մեզ գրում են. «Այստեղ սարսափելի տարածված է կարմրուկ, բկացաւ և ծաղիկ հիւանդութիւնները. ամեն օր 3—4 երեխաներ են մեռնում։ Այս երկու ամսում 80-ից աւելի երեխաներ զոհ գնացին այդ հիւանդութեան։ Գիւղը զուրկ է հասարակ ֆելդշերից և բժշկական միջոցներից։ Տեղական քահանան, որ դեղերը ձրիաբար էր տարածում, նա էլ տարակուսած անձեռնհաս է բոլորին օգնութեան հասնել»։

—

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Արդէն վեցերորդ ամիսն է, ինչ գրադարան-ընթերցարանի համար ընտրված է նոր պատասխանատու անձ, բայց մինչև օրս նրա ոչ մի արդիւնքն էլ չերեւաց»։

—

ՀՆԶԵՇՏԻՑ մեզ գրում են. «Այն օրից, երբ կողոպտվեց մեր եկեղեցին, գողութիւնները անընդհատ շարունակվում են տեղումս, որ և ենթադրել է տալիս մի աներկիւղ խմբի գոյութիւնը. ոստիկանութեան բոլոր ջանքերը զուր են անցնում. գողութիւնը աւելի յանդուգն կերպարանք է ստացել։ Անախորժ հիւրերի ակամայ այցելութեանն արդէն շարքով արժանացան տեղական գրեթէ բոլոր անձերը, ինչպէս նոտարիուս, բժիշկ, առևտրական. վերջին օրերս մտել էին և Մանուկ-բէյի կառավարչի սենեակը, մինչդեռ դրան առաջ պահապանը նստած հսկելիս է եղել, և զարմանալին այն է, որ սրանք մտել են սենեակ և ինչ որ գտել՝ հաւաքել և դուրս եկել, իսկ պահապանը նստած ատիճանների վրա շարունակում է իր պաշտօնը. յետոյ պարզվեց, որ ենանդուն պահապանը նոյն այդ միջոցին մրափում է եղել. գուցէ և երկիւղիցը... Այժմ իւրաքանչիւր ոք սպասում է իր հերթին ոչ առանց ահի, քանի որ ոչ ոստիկանութեան (որ բաղկացած է մի պրիստաւից ու մի ուրեադնիկից առանց ոստիկանների) և ոչ էլ պահապանի վրա վստահել կարելի է. ստիպված ենք աչքի ընկնող իրեղէնները սենեակներից վերցնել և դիզել ննջարանում, և անձամբ հսկել գիշերները»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԼԻԲԵՐԱԼԻԶՄԻ ԱՊԱԳԱՆ

—

Զարաբաստիկ «մաքսային հարցը» ուժեղ հարուած հասցրեց գերմանացի լիբերալներին։ Նրանք հիասթափվեցին և զգացին իրանց ոյժերի ոչնչութիւնը ագրարների դէմ։

Բայց այդ պարտութիւնը մի և նոյն ժամանակ մի իրատեսական դաս դարձաւ, որ և ստիպեց լուրջ քննութեան ենթարկելու գերմանական լիբերալ կուսակցութեան կազմը, ուղղութիւնն ու ապագան։

Ամենից առաջ հրապարակ եկաւ աշխարհահռչակ պատմագէտ պրոֆ. Մօմզէն, որ իր հեղինակաւոր ձայնով կոչ արեց Գերմանիայի բոլոր ազատամիտ կուսակցութիւններին՝ լիբերալներին, սոցիալ-դեմոկրատներին և այլն—միանալ և միացած ոյժերով պաշտպանել ընդհանուր շահերը, միացած ոյժերով կռուել պահպանողական ու յետադէմ հոսանքի դէմ։

Այո, հեղինակաւոր է Մօմզէնը, ուշագրաւ էր նրա կոչը, բայց ոչ գործնական, ուստի և մնաց «ձայն բարբառոյ յանապատի»։

Այժմ էլ լիբերալ կուսակցութեան մի ուրիշ ազդեցիկ անդամն է ձայն բարձրացրել նոր առաջարկով։ Դա յայտնի իրաւաբան պրոֆէսօր Լիստն է, որ «Vossische Zeitung» օրաթերթում զետեղել է իր հետաքրքրաշարժ յօդուածը՝ «Գերմանական լիբերալիզմի ապագան» վերնագրով։

Գերմանական բայխստագը հիմնված է, ասում է Լիստը, ամբողջ ժողովրդի շահերը պաշտպանելու համար—ժողովրդական ներկայացուցիչների միջոցով։ Բայց այժմեան պայմաններում դա անհնարին է, որովհետև այդ բարձր հիմնարկութիւնը դարձել է զանազան կուսակցութիւնների մրցման ասպարէզ, որովհետև այդ կուսակցութիւններից իւրաքանչիւրն աշխատում է միմիայն իր սեփական շահերը պաշտպանել, անուշադիր թողնելով ընդհանրութիւնը։ Այսպէս օրինակ. ագրարները մաքսային հարցի քննութեան ժամանակ աշխատում էին ամեն ինչ զոհ բերել իրանց շահերին... գրեթէ նոյն ձևով են վարվել և միւս կուսակցութիւնները ուրիշ խնդիրներում։

Նրա կարծիքով Գերմանիայում միայն լիբերալ կուսակցութիւնը կարող է ընդհանուր շահերի պաշտպան հանդիսանալ։ Այդ խնդրում սոցիալ-դեմոկրատիան էլ անզօր է, որովհետև նա մի որոշ դասակարգի—բանւորների ներկայացուցիչ է և պիտի պաշտպանէ միմիայն այդ դասակարգի շահերը։

Սակայն լիբերալ կուսակցութիւնը այսուհետև պէտք է լուրջ կերպով զբաղվի սոցիալական հարցով, աշխատէ բարելաւելու բանւորների, գիւղացիների և մանր բուրժուաների վիճակը, որպէս զի դրանով մեծացնէ իր ոյժն ու ազդեցութիւնը։

Հռչակաւոր պրոֆէսօրի այդ յօդուածի ուշագրաւ կողմերից մէկն էլ այն է, որ նա աշխատում է պետութեանը հասկացնել, թէ Գերմանիայի համաշխարհային քաղաքականութեան (Weltpolitik) յաղթանակին նպաստող միակ կուսակցութիւնը լիբերալներն են, որովհետև այդ քաղաքականութեան նպատակին է զարգացնել—տարածել վաճառականութիւնը, իսկ վաճառականութիւնը կենտրօնացած է բուրժուաների ձեռքում, որոնց շարքերի պատկանում են և լիբերալները։ Պահպանողական կուսակցութիւնը գլխաւորապէս ազնուականութեան ներկայացուցիչն է, որ երբէք չէ կարող պետութեանն աջակցել համաշխարհային քաղաքականութեան խնդրում։

Այդպէս ուրեմն, ամփոփելով յարգելի պրոֆէսօրի կարծիքը, կարելի է դուրս բերել այն եզրակացութիւնը, թէ նա լիբերալ կուսակցութեան ապագան բարելաւելու համար այդ կուսակցութեան կողմնակիցներին առաջարկում է լայն չափով զբաղվել սոցիալական հարցով, իսկ պետութեանը հասկացնում է, թէ ձեռնտու է օր առաջ հեռանալ պահպանողականներից և մօտենալ լիբերալներին։

Անչուշտ հետաքրքիր է այդ առաջարկութիւնը, իբրև մի հեղինակաւոր անձնաւորութեան կարծիք, բայց նա բաւական հեռու է իրականութիւնից և համակված է կուսակցական միակողմանութեամբ ու լաւատեսութեամբ, ուստի և արժանանալու է նոյն վիճակին, ինչպէս Մօմզէնի առաջարկութիւնը—Անցողակի

հետաքրքրութիւն և ուշադրութիւն, իսկ յետոյ —մոռացութեան քող։

Ե. Թ.

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Թէհրան, մարտի 5-ին

Ընթերցողները գիտեն թէ՝ խաղաղասիրական գեղեցիկ արդիւնքներով յղի շարժումը՝ օրէ օր հրքան ծաւալ կառնէ Եւրոպայի մէջ։ Ազգերը, ժողովուրդները՝ կամաց կամաց թափանցուելով եղբայրութեան և համերաշխութեան գաղափարով, մանաւանդ գիտակցելով այն անագին չարիքները, բարոյական և նիւթական չարիքներու մասին, որոնց աղբիւրը կը դառնան պատերազմները, կաշխատին հեռացնել իրենցմէ թշնամութեանց մութ ուրուականը։ Այս զգացումն է, որ առաջ բերաւ Լահէի դեսպանախորհրդի (conférence) գումարումը, որը ստեղծեց Իրաւարար Ատեանը (Cour d'Arbitrage)։ Անտարակոյս այս գերազանցօրէն մարդասիրական հաստատութիւնը իր վրա դրուած յոյսը ամբողջովին չարդարացուց, չը կարողացաւ տալ իր բոլոր պտուղները։ Բայց գաղափարները դամերու կը նմանին, որպէս զի լաւ հաստատուին, լաւ խարսխին ուղեղներու մէջ, պէտք է անոնց գլխին միշտ զարնել։ Իրաւարարութեան գաղափարը այդ կարգի գաղափարներէն է ու այդ նպատակով ստեղծուած ատեանը ուշ կամ կտնուի պիտի կատարէ իր դերը ամբողջապէս։ Արդէն, պետութիւնները՝ տարաձգելով ժամանակակից պատերազմի մը զարհուրելի հետեւանքներն՝ կը թուին իրաւարարութեան սկզբունքը կամայ ակամայ յարգել։ Վէնէցուէլայի վէճին Լահէի ատեանին առջև հանուիլը այդ յարգանքի ապացոյցներէն մէկն է։

Խաղաղութեան և իրաւարարութեան յաղթանակը՝ ոչ թէ պետութիւններու, այլ ժողովուրդներու գործը պիտի ըլլայ սակայն։ Ժողովուրդներն են որ՝ գիտակցելով իրենց սրբազան պարտականութիւններուն՝ պիտի արգելէն իրենց պետութիւնները պատերազմ մղելէ, ու իրենց վէճերը կարգադրելու խաղաղութեամբ և արդարութեամբ։

Ու ինչպէս քիչ առաջ ըսի, ժողովուրդները հետզհետէ գիտակցելու վրա են իրենց պարտականութիւններուն։ Ու այդ գիտակցութեան ձայնն է, որ կը բարձրանայ խաղաղասիրական ընկերութիւններու միջոցով, որոնք ցրված են քիչ շատ քաղաքակիրթ ամէն երկրի մէջ։ Խաղաղութեան ընկերութիւններ կան ոչ միայն Եւրոպայի և Ամերիկայի մէջ, այլ և ասիական պետութիւններու, ինչպէս է Ճապոնիայի և նոյն իսկ Չինաստանի մէջ։

Այդ տեսակ ընկերութիւն մը հաստատուեցաւ նոյնպէս Թէհրանի մէջ։ Հայերը՝ իբրև կուլտուրական ժողովուրդ, իբրև եւրոպական քաղաքակրթութեան ձգտող ազգ, բնականաբար չէին կրնար անտարբեր մնալ այդ շարժումին նկատմամբ։ Մանաւանդ որ այդ շարժումէ կը սպասեն դրական օգուտներ։ Խաղաղասիրական համաժողովներու մէջ միշտ արծարծուեր է մեր դատը։ Խաղաղասիրական ընկերութիւնները միշտ սրտի մօտիկ են զգացել մեր նահատակ եղբայրներու դատը։ Հետևաբար մեր պարտականութիւնն է ոչ միայն հաճակրել այդ շատ գեղեցիկ շարժումին, այլ և ստանձնել այդ շրջաններու մէջ որքան կարելի է գործօն դեր։

Ահա այս կրկին տեսակէտները աչքի առաջ ունենալով՝ Թէհրանի մէջ ստեղծվեցաւ խաղաղասիրական ընկերութիւն մը։ Եւ արդէն այդ տեսակ ընկերութիւն մը հաստատելու փորձեր եղած են 1901 թ-ին։

Արդ, մարտ 2-ի կիրակի օրը՝ Համբարձումի Առաքելեանի նախաձեռնութեամբ՝ խաղաղասիրական շարժումի համակիրները՝ Պարսկա-Հնդկաստանի առաջնորդ Սահակ եպիսկոպոս Այվատեանի նախագահութեան տակ միտինգ գումարեցին։ Այդ ժողովի մասին որոշ և ամփոփ տեղեկութիւն տալու համար առաջ կը բերեմ այստեղ ժողովի արձանագրութիւնը։

«Մենք, Պարսկաստանի Թէհրան մայրաքաղաքում ապրող և գտնվող հայերս և խաղաղասէրներս՝ այսօր, ընդ նախագահութեամբ Պարսկա-Հնդկաստանի Թեմի առաջնորդ Սահակ արքեպիսկոպոս Այվատեանի, ատենապետութեամբ պ. Համբարձում Առաքելեանի և քարտուղարութեամբ պ. Տիգրան Զաւէնի հրապարակական ժողով (միտինգ) գումարելով՝

Ներկայացուած խաղաղասիրական ոգով, և ունենալով գիտակցութիւնը այն անագին բարիքների, որ կարող է արտադրել խաղաղութեան և միջազգային իրաւարարութեան վեհ գաղափարը՝

Նկատի ունենալով, որ Պարսկաստանում վաղուց գործադրվում է թէ հայերի և թէ պարսիկների մէջ իրաւարարութեան սկզբունքը անհատների միջև ծագած վէճերի վերաբերմամբ՝

Նկատի ունենալով, որ դեռ 1901 թ-ին ծրագրուած էր կազմել Թէհրանում խաղաղասիրական մի ընկերութիւն «պարսկահայերի խաղաղութեան և իրաւարարութեան ընկերութիւն» անունով՝ բայց այդ ընկերութիւնը դեռ ևս չէ պաշտօնավարել՝

Ցանկանալով մի նոր զարկ տալ իրաւարարութեան սկզբունքին Պարսկաստանի մէջ,

Լսելով՝ նախագահ սրբազանի ճառը խաղաղութեան մասին բնաբան ունենալով աւետարանի խօսքը՝ «Զիսաղաղութիւն իմ թողում ձեզ, զիսաղաղութիւն իմ տամ ձեզ» և լսելով այսօր հայ հրապարակախօս պ. Հ. Առաքելեանի դասախօսութիւնը «Խաղաղասիրական շարժումը Եւրոպայում և զինաւորված խաղաղութիւնը» վերնագրով, լսելով նոյնի զեկուցումը IX, X, XI խաղաղութեան համազգային կոնգրէսների, ինչպէս և Բերլինի խաղաղութեան միջազգային մնայուն բիւրոյի գործունէութեան մասին՝ որոշեցինք.

Վերահաստատել «Պարսկաստանի հայերի խաղաղութեան և իրաւարարութեան ընկերութիւնը», որի կեդրոնը կը լինի Թէհրան մայրաքաղաքը և ճիւղեր կունենայ Պարսկաստանի այլ հայաբնակ քաղաքներում։

Խաղաղութեան բարեկամների ներկայ ընդհանուր ժողովը լսեց նաև Բերլինի միջազգային բիւրոյի 1903 թ. յունվար 25 թուականի շրջաբերականը (որը հրաւիրում էր բոլոր երկիրների խաղաղասիրական ընկերութիւնները հրապարակական ցոյց անել փետրվարի 22-ին խաղաղութեան ի նպաստ) և միաձայն քուէարկեց հետևեալ որոշումը.

«Ընդհանուր ժողովը ջերմագին կոչումն է անում քաղաքակիրթ երկրներում գտնվող բոլոր խաղաղութեան բարեկամներին, որպէս զի նրանք իրախուսեն իրանց ամբողջ ուժով այն զգացումը, որին ծնունդն է Լահէի կոնֆերենցիայի և Իրաւարար Ատենի ստեղծումը։ Ժողովը թախանձագին հրաւիրում է խաղաղասէրներին, որպէս զի նրանք արագացնեն գալուստը այն օրուայ, երբ այդ Ատեանը կը կոչուի կատարել ազգերի մէջ այն պաշտօնը որ ազգային դատարանները կատարում են այնքան ազդեցիկ կերպով, ներքին վէճերի համար, իւրաքանչիւր երկրում»։

Մենք կը փափաքէինք խաղաղասիրական շարժումը տարածուած տեսնել Պարսկաստանի բոլոր հայաբնակ քաղաքներու մէջ, հետևաբար ներկայ դրութեամբ կը հրաւիրենք մեր բոլոր բարեկամները այս ուղղութեամբ քայլեր առնել, կազմել խաղաղութեան ընկերութեան մասնաճիւղեր և իմաց տալ կեդրոնին՝ Թէհրան։ Այդ պարագային իրենց կուղղուի խաղաղասիրական ընկերութեան կանոնագիրը, որու համար պէտք է դիմել ընկերութեան քարտուղարին՝ այս հասցէով՝ M. Tigrane Zaven, Téhéran.

Տիգրան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Вечерняя Почта» լրագիրը հաղորդում է, թէ Մակեդոնիայից եկած մի սուրհանդակի ասելով, վերջին օրերում Գրիլեպ, Օխրիդ և Կրուշեվօ քաղաքներում առնարականների բոլոր խանութները փակված են։ Վաճառականներն ու արհեստաւորները—բոլորը, յոյն և բուլգարացի—միասին իրանց խանութների և արհեստանոցների բանալիները ներկայացրին այդ քաղաքների գայմագամներին, յայտնելով նրանց, որ զինուորների կողոպտումների և բռնութիւնների պատճառով, որ նրանք գործում են առանց որ և է պատժի, իրանք, վաճառականները և արհեստաւորները, այլ ևս հնարաւորութիւն չունեն շարունակելու իրանց առևտուրը և պարապմունքները։ Տասն օրվայ ընթացքում զինուորները և բաշիբոզուկները 72 մարդ են սպանել քրիստոնեաներից միայն Գրիլեպի գաւառում։ Մարտի 17-ին Գրիլեպի քաղաքացիներից 200 հոգի, նիզամներից բռնաբարված իրանց կանանց ուղեկցութեամբ, ուղևորվեցին Բիտոլիա գանգատվելու։ Շատ ընտանիքներ Շէյիպից աղատվեցին անպատուութիւնից և կոտրածից՝ փախչելով Սոլուն, իսկ ազգաբնակութեան արական սեռի մեծ մասը փախաւ Սոֆիա։

—Ներկայ 1903 թուականի պրուսական բիւջէում դեռևս դրված է 11,500,000 մարկի ծախք «գերմանական տարրը Պոզնանում պաշտպանելու համար»։ Վիճաբանութիւնները այդ միլիոնների մասին պրուսական պատգամաւորների ժողովում պատվում էին «ալեհական վրտանգի» շուրջը։ Պետական կանցլեր Բիւլով մի քանի անգամ ինորհակալութիւն յայտնեց ֆինանսների մինիստրին այն առատաձեռնութեան համար, որ նա ցոյց է տալիս այդ գործում, չը նայելով պետական ֆինանսների ուշնախանձելի դրութեանը։ Լեհ-պատգամաւոր Գլեմբոցկի արտարարցի կերպով նկատեց, թէ ամբողջ բիւջէտը պէտք է անուանել ոչ պետական, այլ հակալեհական, կամ,—ասաց պատգամաւորը,—աւելի լաւ կը լինէր անուանել «ազգականութեան բիւջէտ», որովհետև ով որ կամենում է որ և է բան ստանալ այդ բիւջէտից՝ նա պէտք է գտնի իր շուրջը «լեհական վտանգ»։ Իսկապէս ասած այդ 11½ միլիոն մարկը ամբողջովին պէտք է ծառայէ, որպէս աւելացնում Պոզնանում ծառայող գերմանացիների ոռճկի վրա, որպէս ծախք նրանց որդոց համար գիշերօթիկ ուսումնարաններ բանալու և այլն։ Որպէս զի այս ամենից օգուտ չը քաղեն այն փոքրաթիւ լեհ աստիճանաւորները, որոնք ծառայում են Պոզնանում, որոշված է տեղափոխել նրանց բոլորին Վեստֆալիա։ Պոզնանում էլ նրանք գոյութիւն ունէին հէնց միայն նրա համար, որ ամենևին չէին իսնամվում լեհական ազգային հարցի մէջ։ և այժմ նրանց տեղափոխում են այն պատճառով միայն, որ նրանց երակների մէջ լեհական արիւն է հոսում։

ԻԱՌՆ ԼՈՒՐԵՐ

ՄԱՆՐԱՆԿԱՐ

—

Ես մտադիր էի Զատկի առիթով ուղարկել պօստ-կարտեր՝ գեղեցիկ նկարներով, խորհրդաւոր գծագրութիւններով և իմ բարեմաղթութիւններով ու շնորհաւորութիւններով։

Բայց...

Բայց պօստ-կարտեր վաճառող Պետիթարովը Թիֆլիսից գնացել է, Մեսխիեվի մօտ եղած նմուշները շատ քիչ են, Սողոմոնեանցը նոր է բացել իր վիմագրատունը, Գնունին փորձեր է անում...

Նուէրներ ուղարկելը անյարմար է։ Պօստում շատ դժուար է հերթի սպասել, մինչև որ ընդունեն իմ ծրարները, իսկ դիմել Նադեժդա և ուրիշ փոխադրող ընկերութիւններին փոքրիկ նուէրների համար՝ անկարելի է, մանաւանդ որ նրանք չեն վերցնում յանձնարարութիւններ ամէն տեղերի համար։

Ի՞նչ անել։

Վճռեցի կրճատել իմ նուէրները, դէն գցել այնպիսիները, որոնց մասին անյարմար է հրապարակով խօսելը և բաւականանալ բարեմաղթութիւններով կամ ցանկութիւններով, վերջապէս կոմպլիմենտներով։

Ես կը սկսեմ «Ուսանողներին օգնող ընկերութիւնից»։ Ես կը ցանկանայի, որ այդ ընկերութիւնից հնչվէր ազգերի միութեան, համերաշխութեան, փոխադարձ օգնութեան հրաւէրը։ Ուստի ամէն մի հանգամանք, որ կարող է թիւրիմացութիւն, ազգային վիրաւորանք և խռովութիւն առաջ բերել, պէտք է հեռացվի, որպէս զի ընկերութեան մէջ բիւրեղանման մաքուր մնայ փոխադարձ սէրի և յարգանքի գաղափարը։

Ինչպէս տեսնում էք, այս իմ բարեմաղթութիւնը երկար դուրս եկաւ։ Պատճառն այն է, որ ես նրան պատրաստել էի պօստ-կարտի համար։

Պէտք է կարճ կտրել։

Որովհետև խօսեցի ուսանողներին օգնող ընկերութեան մասին, մի բարեմաղթութիւն էլ անեմ այն պարոնին, որ յաջակցել էր ընկերութեան օգտին յայտնի բրօշիւրից ստացած օգուտը։

Ալէքսէեվ-Մեսխիէվին՝—այնպէս քայլ չանել, որպէս զի յետոյ ստիպված լինէք ոսկեզօծելու։ Դա զատկական ձու չէ, որ ներկէք։

Հեռագրական գործակալութեան՝—այնպիսի հեռագիրներ, որ մարդ գտնէ համբերութիւն ունենայ կարդալու։

Պետերբուրգի ուսանողների մի խմբին՝—գիտական բացատրութիւն այն բանի, թէ ինչու «Бакинскія Извѣстія»-ն անաջողութեան հանդիպեց։

Բժիշկներին՝—երախտագիտական ուղերձ միկրօբներին։

Բանաստեղծներին՝—չափեր և յանգեր, յետոյ ստորագրութիւն խոշոր տառերով։

Ալէքսանդր Մակեդոնացու ուրուականին՝—եթէ դու յարութիւն առնէիր և տեսնէիր, թէ ինչ է կատարվում քո Մակեդոնիայում։

Համիդիական քիւրդերին՝—որքան առատ հունձ Ալբանիայում և Մակեդոնիայում։ Եթէ ձեզ այնտեղ ուղարկէին։

Գիւղացիներին՝—Ձեր տուած խնդիրների գոնէ մի մասի կատարում։

Ամուրիներին՝—Կորցրած հարսնացուների ցուցակը։

Օրիորդներին՝—Ընդունակութիւն թելադրելու հաւանած երիտասարդին, որ նա առաջարկութիւն անէ։

Թուրք խաղացողներին՝—Դժբաղդ ընկերներ։

Առաջնորդին՝—Առաջնորդելու և առաջնորդվելու համար առաջնորդող։

Տէրտէրներին՝—Թողութիւն իրանց կամաւոր մեղքերի համար։

Տիրացուներին՝—Թարմ ախորժակ, տէրտէրի քսակ։

Աւագակներին՝—մուրհակներ իրանց վերցրածները վերադարձնելու համար։

Կատակողներին՝—մի մարգարէ, որ կարողանար ասել, թէ ինչ վիճակի մէջ պէտք է լինեն նրանց գումարները մի քսան, երեսուն և յիսուն տարուց յետոյ։

Կրիտիկոսներին՝—գերբնական ընդունակութիւն համոզելու անտաղանդին, որ նա զուրկ է տաղանդից։

Վաճառականներին՝—խիստ հրաման արգելելու սպառող, փոխառու և ուրիշ այդտեսակ ընկերակցութիւնները։

Բեպօրտէօրներին՝ — ընդունակութիւն ոչնչից ինչ ստեղծելու, ապագայ լուրերը նախատեսնելու։

Նկարիչներին՝—մեծ մեծ պահեստներ չը ծախված պատկերները տեղաւորելու համար։

Ծոյլերին՝—բեղմնաւոր ծուլութեան տասնամեակի, քսանամեակի, քսանհինգամեակի, քառասնամեակի, յիսնամեակի փառաւոր յոբելեանական հանդիսակատարութիւններ։

Հայ հեղինակներին՝—հասնել իրանց տենչանքին, այն է տեսնել երկրորդ հրատարակութիւն։

Գիւղատնտեսական ընկերութեան՝—վճռել այն հարցը, թէ ո՞վ պէտք է տայ կովկասեան ցուցահանդէսի պարտքերը։

Սինոդականներին՝—նշանակած և կատարված քննութիւնների մասին որոշում և վճիռ։

Երկաթուղուն՝—երկաթեայ, պղնձեայ և մետաղեայ մարդիկ, որոնք չը ջարդվէին խորտակումներից։

Ձայնաւորներին՝—միայն ձայնաւորով չը լինել ձայնաւոր, այլ ժողովրդի գանգատի ձայնի համաձայն գործելով։

Մեր դերասաններին՝—մի հարց. արդեօք ընդունում էք դուք ամպլուա կոչված բանը։ (Պատասխանը յայտնեցէք ձեր ընկերներին)։

Մեր դրամատուրգներին՝ — բարեհաճեցէք իրաւունք տալ հասարակութեանը և կրիտիկային սեփական կարծիք ունենալու։

Գրաշարներին՝—համբերութիւն շարելու և այն, ինչ սրտին մօտ է, և այն, ինչ որ ծանր վիշտ է։ Եթէ աչքը վնասվում է, գոնէ լաւ գրուածք շարելու վրա վնասվէր։

Բուլգարներին, սերբերին, յոյներին և ռումիններին՝—հէր օրհնածներ, դուք էլ միմեանց միս ուտելու միմեանց թշնամութիւն անելու ուրիշ ժամանակ չը գտաք։

Պարսկահայերին՝—ազատութիւն և իրաւունք կաշկանդված ձեռքերում։

Աշուղներին՝ փառաբանել ազգի իշխաններին, որոնք յիշում են այսօր իրանց աղքատներին։

Աղքատներին՝—ձեռք վերցնել որկրամոլութիւնից և շռայլութիւններից։

Տէրերին՝—Մի քանի օր դառնալ ծառաներ նրանց վիճակը հասկանալու համար։

Մակեդոնացիներին՝—գոնէ յետագայ Զատկին։

Թիւրքիային՝—ոչ մի ստիպմունք, միայն իր տուած խոստումների կատարում։

Պանդուխտին՝—յիշել երգի այն կտորը «Անդ հեռու ալեոր, հայր ունիմ արդաւոր»։

Բանտում նստածներին՝ — ապրիլի մէկ։

«Русское Собраніе»-ին, Սիգմային, Վէլիչկոյին՝—բարեօնեան խառնակութիւնից յետոյ յիշել Եհովային։

Հայ ինտելիգենցիային՝—վճռել այն հարցը, թէ ինչ է ինտելիգենցիան և ինչ գործ ունի նա կատարելու։

«Շէարբի-Ռուս» թուրքերէն լրագրին՝—վերցրէք մնունդը Եւրոպայից, իսկ լեզուն ժողովրդից։

«Каспій» լրագրին՝—աւաղ փառաց անցաւորի (Sic transit gloria mundi)։

Պոլսի լրագրներին՝—մի հարց. երբ արդեօք դուք պէտք է հաղորդէք լուրեր այն բանի մասին, թէ ինչ է կատարվում ձեր երկրում։

«Բազմավէպին» և «Հանդէս Ամսօրեայի»՝—չը վարանել և չը տատանվել նոր ուղղութեան մասին հերթական դարձած հարցը համարձակ լուծելու։

«Մշակին»՝—գնա աներկիւղ դէպ առաջ։ Դու որ կուռի մէջ մեծացել ես, կուռի մէջ ամրացել, կուռի մէջ անընկճելի ոյժ հանդիսացել, շարունակիր քո գործը իբրև մտաւոր զինուոր և մշակ, հաւատալով ապագային։

Մեր ընթերցողներին՝—ցը գրութիւն։

Մանուկներին՝—Շնորհաւոր Զատիկ։

Վրթին

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՍ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

4 ապրիլի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Տվերի փոխ-նահանգապետ Ուսովին և ֆինանսների մինիստրութեան Լենդոնի գործակալ Տատիշչէվին հրամայված է լինել մամուլի գործերի գլխաւոր վարչութեան խորհրդի անդամներ։—Ներքին գործերի մինիստրը որոշեց դադարեցնել «Уралецъ» լրագրի հրատարակութիւնը երեք ամսով։—Միտրովիցի ռուսաց հիւպատոսութեան կառավարչի հեռագիրը. «Ապրիլի 1-ին հանգուցեալ հիւպատոս Շչէրբինայի մարմինը փոխադրվեց կայարան՝ Սօլունի, Կ. Պոլսի և Օդէսայի վրայով Չէրնիգով ուղարկելու համար։ Տխուր յուղարկաւորութիւնը տեղի ունեցաւ հիւպատոսարանից առաւօտեան 6½ ժամին։ Մարմինը ուղեկցում էին Պրիզրէնի միտրոպոլիտը, 9 քահանաներ, կօմենդանտ Սաիդ-բէյ, Ուսկիւբի և Պրիշտինի սերբական հիւպատոսները, բազմաթիւ օֆիցէրներ և զայմագամը մեծ սվիտայով. ինն օֆիցէրներ տանում էին հանգուցեալի չքանչանները, իսկ հինգ իշխան մարդիկ—պսակներ, երեք բատալիոններ հրացանաձգութեամբ պատուեցին հանգէսը, իսկ յետոյ ուղեկցում էին նրան երաժշտութեամբ։ Բացի դրանից, համապատասխան պատիւներ տալու համար, հինգ անգամ թնդանօթներ արձակեցին։ Դագաղը, ծածկված հիւպատոսական դրօշակով, մտցրին վագոնը։

ՍՕՖԻԱ։ Իշխանը այսօր շրջաբերականով յայտնեց ժողովրդին, որ արտասահման է գընում ընտանեկան գործերով և կառավարութիւնը յանձնում է մինիստրների խորհրդին։ Նա գնում է Մենտոնա, ուր գտնվում են նրա երեխաները։—Կիւստէնդիլից հաղորդում են, որ, չնորհիւ զինուորական մինիստրի կարգադրութիւնների և խիստ հսկողութեան սահմանապահ զօրքի նոր նշանակված հրամանատարի կողմից, սահմանը կատարելապէս փակված է ոչ միայն հրոսակախմբերի, այլ և մասնաւոր անձանց համար։

ԱԼԺԻՐ։ Հանդիսաւոր ճաշի ժամանակ Լուբէ կենաց առաջարկեց, որի մէջ ուրախութիւն յայտնեց Թագաւորներին, որոնք ուղարկել են այնպիսի գեղեցիկ նաւեր իրան ողջունելու համար։ Համակրութեան այդ ապացոյցները համահաւասար չափով պատիւ են բերում Ֆրանսիային և նրա կօլօնիաներին և արձագանք կը գտնեն ամբողջ ազգի մէջ։

Կ. ՊՕԼԻՍ։ Մեծ վիզիրը սերբական դեսպանին Բ. Դրան գոհունակութիւնը յայտնեց Սերբիայի օրինական ընթացքի առիթով այն անցքերի վերաբերմամբ, որոնք տեղի են ունեցել հարևան տեղերում, և յոյս յայտնեց, որ Սերբիան սրանից յետոյ ևս կը վարվի նոյն եղանակով։

ԼՕՆԴՕՆ։ «Morning Post» լրագրին հաղորդում են Շանղհայից, որ Ամերիկայի և Չինաստանի միջև դաշնագիր կապելու բանակցութիւնները կատարելապէս դադարեցին։ Այդ դրութիւնը ստեղծվեց նրանով, որ Չինաստանը մերժեց Միացեալ-Նահանգների միտումները՝ բոլոր մաքսատները ոչնչացնելու մասին երկրի ներսում։

ՄԱԼՏԱ։ Էդուարդ Թագաւորը ժամանեց։

ՆԻՒ-ԵՕՐԿ։ Բօսնից ստացված հեռագրի համաձայն, Տէխատում, Սպինդլէտոնի նաւթաբեր շրջանում այրվեցին 256 վիշկաներ, որոնցից 200 շահագործութեան մէջ էին։ Վնասները 10 միլիոն դօլլար են հաշվում։

Կ. ՊՕԼԻՍ։ Ապրիլի 4-ին սպասվում է «Դոնեց» նաւը Շչէրբինայի մարմնով։—Բոլգարական էկզարխը, Բ. Դրան առաջարկութեամբ, ուղարկեց շրջաբերական, որի մէջ խորհուրդ է տալիս համբերութիւն ունենալ և նպաստել կառավարութեանը խոստացված ռէֆորմների իրագործման գործի մէջ։—Պաշտօնապէս հաղորդում են, որ Խիլմի-փաշա մտցնում է քրիստոնէական ոստիկանութիւն Կոսովի վիլայէթում։

ՀՌՕՄ։ Էդուարդ Թագաւորը կը ժամանէ այստեղ ապրիլի 14-ին և կը մնայ երեք օր։

ԱԼԺԻՐ։ Լուբէն այցելեց ցերեկով Ալժիրի շրջակաները և մասնակցեց այն ճաշին, որ տուին ի պատիւ նրա դէպարտամէնտի կօրպօրացիաներից ընտրվածները, և երեկոյեան ճանապարհ ընկաւ Օրան։ Ծովային մինիստրը ընդունեց օտար նաւատորմերի այստեղ գտնվող հրամանատարներին և ողջոյնի ճառի մէջ ցանկութիւն յայտնեց, որ այդ նաւատորմերը, որոնց պատկանում են այդ նաւերը, երբէք չը հանդիպէին այլապէս, քան որպէս եղբայրներ։

Կ. ՊՕԼԻՍ։ Գլխաւոր շտաբի հրամանատարի օգնական մարշալ Օմեր-Բուշատի-փաշա նշանակված է այն զօրքերի հրամանատար, որոնք կենտրոնացած են Միտրովիցայի, Պրիզրէնի և Վերիսովիչի մօտ։

ՏԱՇԿԷՆՏ։ Զինաւորված և դիմակաւորված վեց հոգուց բաղկացած աւազակախումբը ուժով մտաւ Նոբէլի դրասենեակը, կողոպտեց դրամարկղը և ծանր վիրաւորեց պահապանին։ Զարագործները փախան։

ՉԷՐՆԻԳՈՎ։ Շչէրբինայի մարմինը, համաձայն հանգուցեալի կամքի, կը թաղվի Տրոյցկի վանքում։

ՄՕՍԿՎԱ։ Ապրիլի 4-ին Նոցա Կայսերական Մեծութիւնները Օլգա Նիկոլաեվնա և Տատիանա Նիկոլաեվնա դուստրների հետ լսեցին ժամասացութիւն Ծննդեան եկեղեցում։

Կ. ՊՕԼԻՍ։ Շչէրբինայի մարմինը, որին ճանապարհին զինուորական պատիւներ են տրվում, կը հասնի շաբաթ և հոգեհանգիստից յետոյ շոգենաւ կը դրվի Ռուսաստան ուղարկելու համար։

ԲԵԼԳՐԱԴ։ Հաւատացնում են, որ արմատական մինիստրները ամենամերձաւոր ապագայում հրաժարական կը ստանան և կը փոխարինվեն կառավարութեանը բարեկամ ազատամիտներով։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎՐԱՑ ԱԶՆՈՒԱԿԱՆՆԵՐԻ ԹԱՏՐՈՆ
Երեքշաբթի, ապրիլի 8-ին
Հայ դրամատիկական խմբի դերասանները
Ղեկավարութեամբ պ. ԱՐՄԷՆԵԱՆԻ
Առաջին անգամ Թիֆլիսում կը ներկայացնեն
Պ. ՊՈՒԱՐԻԷԻ ՓԵՍԱՆ
Թատերախաղ 4 արար. հեղ. Էմիլ Օժիէի և Ժիւլ Սանդօի, թարգմ. Լ. Մէլիք-Աղամեանի և Արմէնեանի։
(Comédie Francaise-ի բէպէրտուարից)
Մարկիզ դը-Պրէլի դերը կը կատարէ պ. Արմէնեան։
Մասնակցում են տ. Դուրեան-Արմէնեան, պ. պ. Արմէնեան, Միրզոյեան, Ռշտունի, Բաբուբեան, Աղեան և ուրիշները։
Սկիզբն է ճիշդ 9 ժամին երեկոյեան։
Անարակտներին կը նուագէ երաժշտական խումբը։
Տեղերի գները սովորական են։
Տոմսակները վաղօրօք կարելի է ստանալ թատրոնի կասսայում։ 1—1

Լոյս տեսան և վաճառվում են
ԿԱՄՍԱՐ ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆՑԻ
1) ԾՈՑԻ ԵՐԳԱՐԱՆ, երկրորդ տպագրութիւն—40 կոպ.։
2) ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ (պատկերազարդ)—25 կոպ.
3) ՈՍԿԻ ՁԿՆԻԿ (պատկերազարդ)—10 կ.
Ցանկացողները դիմում են՝ Центральная Книжная торговля, Книжный магазинъ „Гуттенбергъ“, Кавказская Книжная торговля. Կամ հեղինակին՝ Тифлисъ, 5 участ., ограда Армянск. церкви во имя св. Георгія. 1—3

ԹԻՖԼԻՍԻ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՄԱՍՆԱԺՈՂՈՎԸ
յայտարարում է, որ այս տարվայ ապրիլի 10-ին, առաւօտեան 10 ժամին, նրա նախագահի բնակարանում (Սուդերնայա փ., № 68), նշանակված է մրցումն մատակարարելու՝ 1) երկաթեայ կապեր մօտ 2000 պուդ, 2) կտուրի համար երկաթեայ թիթեղներ մօտ 5000 պուդ, 3) կտուրի համար տոլ՝ մօտ 2000 քառ. սաժ., 4) Պորտլանդի ցէմէնտ՝ մօտ 1000 պուդ, 5) կուպր մօտ 200 պուդ, 6) մօտ 300 քառ. սաժ. կտուրը ծածկելու աշխատանք և տոլի աշխատանք մօտ 1800 քառ. սաժէն։
Թիւված նիւթերի մատակարարութեան մանրամասն պայմանները կարելի է տեսնել ամեն օր Մասնաժողովի գործավարի մօտ (Սուդերնայա փողոց, տուն № 10, բնակ. 7)։ Մրցմանը մասնակցել ցանկացող անձինք պէտք է ունենան վկայականներ իրանց անձնաւորութեան մասին կամ անցագիր և ներկայացնեն դրամական ոչ պակաս քան իրանց յայտարարած գների 10%-ը։ Դրամականները կարող են լինել առձեռն դրամ կամ տոկոսաբեր թղթեր, որոնք ընդունվում են արքունի կապալների կամ մատակարարումների համար։ 3—3

Ֆրանսիական Շոգենաւային Ընկերութիւն
«ՄԵՍՍԱԺԵՐԻ ՄԱՐԻՏԻՄ»—«MESSAGERIES MARITIMES».

14/27-ին ապրիլի մեկնելու է Բաթումից, երեկոյեան ժամը 5-ին, «Ortégal» շոգենաւը, հանդիպելով Տրապիզօն, Սամսօն, Կ. Պոլիս, Դարդանել, Զմիւռնիա, Պիրէյ, Սիւդ, Մարսէյլ, Հավրև Լենդօն։
Ուղղակի հաղորդակցութեան տոմսակները մինչև Պարիզ, նոյնպէս և մինչև Շանղհայ (Չինաստանում), Վլադիվոստոկ գնացողների համար, կարելի է ստանալ Թիֆլիսում պակասեցրած գներով։
Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւնների համար դիմել՝ Ընկերութեան Թիֆլիսի գործակալ՝ պ. Վ. Յակոբեանին, նախկին Արծրունու գալերէյում, № 127 գրասենեակը, հեռախօս № 608։ Գրասենեակը բաց է՝ ժամը 9—1-ը ցերեկվայ և 5—7-ը երեկոյեան, բացի կիրակի օրերից։ 1—1

ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ ԳՐԱԽԱՆՈՒԹՈՒՄ
վաճառվում են հետեւեալ նոր հրատարակութիւնները.
«Սամուէլ», Բաֆֆիի, ա. բ. գ. գիրք, կազմ.—4 ր. 25 կ.։ «Ստամբոլի կատարրը», բժ. Օբոլենսկիի, հրատ. բժ. Բուդուղեանի—20 կ., «Աստուած գիտէ արդարն ու մեղաւորը, բայց դատարանը չուտ չի անում» կոմս Լ. Տոլստոյի—5 կ.։ «Ոսկի ձկնիկ», պատկերազարդ, մանուկների համար, Պուշկինի—10 կ.։ «Մայրենի լեզու», ա. տարի. գ. տպագր., Արաբաջեանի—25 կ., «Գնդարուեստական Ալբոմ», 8. Կ. Այվազովսկու յիշատակին, խմբ. Բաղդասարեանց և Օբրոյեանց, չբեղ կազմ.—5 ր.։ «Մարոյի Ալբոմը», Մարիկեանցի—20 կ.։ «Մեծն Ներսէս», կազմեց Ե. Թ., հրատ. Արամեանցի—10 կ.։ «Մի քանի խօսք մեր ընթերցողներին», Սմբատ Շահ-Ազիզի—60 կ.։ «98 տարի առաջ», թարգմ. Ստ. Լիսիցեանցի—25 կ.։ «Բանաստեղծութիւններ», Կ. Տէր-Դաւթեանի—25 կ.։ «Հայոց եկեղեցու համառօտ պատմութիւն», 8ով. քահ. Մարտիրոսեանի—35 կ.։ «Վարժապետը», թարգմ. Լեոն Մ. Ադ.—5 կ.։ «Անգործ կանայք և Աշխէն», Գ. Ե.—10 կ.։ «Օտարութեան մէջ», Լ. Ման.—15 կ.։ Բարոյական պատմութիւններ», մանուկների համար—40 կ.։ «Մոցի երգարան», Կ. Տէր-Դաւթեանցի—40 կ..
ՊՕՍՏ—ԿԱՐՏԵՐ հատը 5 կ. Աբովեանի, Նազարեանի, Նալբանդեանի, Պատկանեանի։ Բաֆֆիի, Ծերենցի, Պարոնեանի, Զանչեանի, Ադամեանի, Պէշիկթաշլեանի, Ստեփանէի, Ներսէս V կաթող., Վարժապետեանի, Գրիգոր Արծրունու, Կարա-Մուրզայի, Պալասանեանի, Իզմիրլեանի, Սրվանձտեանի, Ազայեանի, Պռոշեանի, Սունդուկեանի, 8իչատակ Մխիթարի, Արձան Գրիգոր Արծրունու, Ս. Շահազիզի, Լէօյի, Ալիշանի, Այդինեանի և այլն։ Ցանկացողները կարող են ձեռք բերել գրախանութից վերև յիշվածների կաբինետ և վիզիտ-լուսանկարները. կաբինետի գինն է 40 կոպ., վիզիտի—20 կ.։ Կան և մեծադիրները, որ արժէն 1 ր.։
Դիմել.—Книжный магазинъ „Гуттенбергъ“, Тифлисъ, д. Лалаева, на Дворцовой улицѣ, рядомъ съ Коммерческимъ банкомъ, Г. Галустяну. 1—3

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀԻԿ ԹԵՐԹ
ԵՐԿՇԱԲԱԹԵԱՑ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍԻ
1903—4 շրջանի համար
Իբրև յաւելուած, բաժանորդները կը ստանան ձրի 4-ից մինչև 6 պատկերազարդ գրքոյկներ։
ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ Է 2 Ր. 50 Կ. (ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ—10 ՖՐԱՆԿ)
Կարելի է վճարել և մաս-մաս. սկզբում 1 ր. 50 կ., յունվարին 1 ր.։ Հրատարակութիւնը սկսվելու է սեպտեմբերին։ Տարեշրջանը սեպտեմբերից սեպտեմբեր է։ Աշխատակցում են շատ հայ բժիշկներ թէ Ռուսաստանում և թէ Թուրքիայում ու Պարսկաստանում։
Բաժանորդագրութեան համար պէտք է դիմել թերթիս խմբագրատունը (Сергіевская ул., д. № 12.—Սերգիեվսկայա փող. տ. № 12), կամ «Գուտտէնբէրգ» «Гуттенбергъ» գրավաճառանոց։
ԲԱԳԻՈՒՄ գրվել «Պրոմէթիէս» գրավաճառանոցում (Товарищество «Прометеусъ»—Баку)։ Պարսկաստանում դիմել Դր. Փաշայեանին (Թաւրիզ)։
Հաստատ. Тифлисъ. Редакція „Арогджапаикъ Тертъ“.
Արտասահմանից. Tiflis, Rédaction „Arogdjapahik Tert“.
4—10 Խմբագիր հրատարակիչ՝ բժ. Վ. Արծրունի

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ ԵՒ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
ՍՈՒԹԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ
Ազգային լիակատար երգարանի առաջին հատորը՝ հինգերորդ տպագրութեամբ, բարեփոխած թէ հին, գործածական և թէ նոր երգերով և բանաստեղծութիւններով, բաղկացած 382 մեծադիր երեսներից։ Գինն է 1 ր. 20 կ.։ Ցանկացողները դիմում են Բագու, «Սոխակի» հրատարակչին սոյն հասցէով. Протоіерею Григорію Григоріанцъ, БАКУ. 5—6

„Ն. Ի. ԲՈՋԱՐՋԵԱՆՑ ԵՒ ՈՐԴԻՔ“
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏԱՆ
ԾԽԱԽՈՏԻ ԳՈՐԾԱՐԱՆԸ
(ՈՐ ԳՈՅՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ 1858 ԹՈՒԱԿԱՆԻՑ ԹԻՖԼԻՍՈՒՄ)
ՆՈՐԻՑ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆՈՒՄ Է
իր արտադրած ծխախոտը գործածող մեծարգոյ հասարակութեանը, և խնդրում է, աչքի առաջ ունենալով իր նշանագրերի (էտիկէտների) շարունակ կրկնվող կեղծումը,
ՆԱՄԱՆԱՆԳ

№ 8 10 Հ. ԱՐԺԷ 5 ԿՕՊ.	№ 15 «ՍԻՄՊԱՏԻԱ» 10 Հ. ԱՐԺԷ 5 Կ.

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ ԴԱՐՁՆԵԼ ԳՈՐԾԱՐԱՆԻ ՆՇԱՆԻ ՎՐԱ

ԽԱՆՈՒԹԻ ՀԵՌԱԽՕՍ № 181.
ԳՈՐԾԱՐԱՆԻ ՀԵՌԱԽՕՍ № 100.
(կիր. չոր.) 5—10

Дозволено Цензурою. Тифлисъ, 4 Апрѣля 1903 г.
Электропечатная Груз. Изд. Т—ва, Б.-Ванкская ул.